ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԳԱՐԵԳԻՆ Բ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԳԻՐԸ ԳԵՐԱՇՆՈՐՀ Տ. ԽԱԺԱԿ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՊԱՐՍԱՄՅԱՆԻՆ՝ ԾՆՆԴՅԱՆ 50 ԵՎ ՔԱՀԱՆԱՅԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ 30-ԱՄՅԱԿՆԵՐԻ ԱՌԹԻՎ

ԳԻՐ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆԱՑ ԱՌ ՍԻՐԵՑԵԱԼ ՈՐԴԻՆ ՄԵՐ ԵՒ ՎԱՍՏԱԿԵԱԼ ՍՊԱՍԱՒՈՐՆ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՄԵՐ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՈՅ, ԳԵՐԱՇՆՈՐՀ Տ. ԽԱԺԱԿ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՊԱՐՍԱՄԵԱՆ, ՈՐ Ի ՆԻՒ ԵՕՐՔ, ԱՄՆ

Համայն հայութեան հոգեւոր կենտրոն Լուսոյ Խորան Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից բերկրանօք սրտի Հայրապետական Մեր օրհնութիւնն ու սրտաբուխ շնորհաւորանքներն ենք բերում Ձեզ՝ ծննդեան 50 եւ քահանայագործութեան 30-ամեայ զոյգ տարեդարձերի առիթով:

Սիրելի Սրբազան. առ Աստուած սիրով եւ Մայր Եկեղեցուն ու ժողովրդին ծառայելու նուիրումով էք Դուք ընտրել Տիրոջ Սուրբ Մեղանին սպասաւորելու ճանապարհը: Ահաւասիկ, երեք տասնամեակ, «իբրեւ զբարւոք զինուորն Քրիստոսի», հաւատոյ Ձեր բարի մարտն էք մղում՝ ամենուր եւ յամենայնի հաւատարիմ առ Աստուած Ձեր ուխտին եւ լուսոյ խորան Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին: Այսօր, քահանայական Ձեր ձեռնադրութիւնից երեսուն տարիներ անց, ուրախ ենք անդրադառնալու, որ Տիրոջ փոքր հօտին՝ հաւատաւոր հայ ժողովրդին ու առաքելահաստատ մեր Եկեղեցուն բոլորանուէր ու նախանձախնդիր ծառայելու Աստուածաշնորհ Ձեր առաքելութիւնը պսակել էք ազգօգուտ եւ եկեղեցաշէն մնայուն յաջողութիւններով՝ վաստակելով հա-

յորդեաց անկեղծ սէրն ու գնահատանքը եւ արժանի դառնալով Արքութեան բարձր պատուին:

Սիրելի Սրբազան, բազմիցս լինելով Տիրախնամ Ձեր թեմում, բերկրանքով ականատես ենք եղել առաջնորդական պատասխանատու առաքելութեան մէջ արձանագրած Ձեր ձեռքբերումներին, ազգային, կրթական եւ բարեսիրական իրագործումներին, որ մխիթարութիւն պարգեւելով բազմաթիւ հայորդիների, նրանց հոգիներից երախտագիտական աղօթք են բարձրացնում առ Աստուած Ձեզ համար:

Գոհութիւն ենք մատուցում Բարձրեալին, որ յոբելեանական այս տարում հնարաւորութիւն ունեցանք Հովուապետական անդրանիկ այցելութիւն կատարել ԱՄՆ հայոց արեւելեան թեմ եւ մէկ անգամ եւս խնդութեամբ լցուելու, որ թեմի ազգային-եկեղեցական կեանքը շարունակում է լեցուն լինել աշխոյժով ու ազգաշէն գործերով՝ ի պանծացումն 1700-ամեակի մեծ յոբելեանի եւ ի պայծառութիւն Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու: Լիայոյս ենք, որ շնորհիւ Ձեր ջանքերի, օրաւուր պիտի զօրանան թեմի հայորդեաց հաւատն առ Աստուած եւ սէրը առ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը, Հայոց Եկեղեցին ու Հայրենիքը մեր:

Ձեր յոբելեանների բերկրաշատ առիթով Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից յղում ենք Ձեզ Մեր սէրը, գնահատանքն ու օրհնութիւնը՝ ի խորոց սրտի աղօթքով Բարձրեալի զօրակցութիւնը հայցելով Ձեր յետագայ գործունէութեանը:

Թող Տէրը զօրացնի Ձեզ հոգեւոր կոչման մէջ եւ պարգեւի քաջառողջ երկար կեանք՝ երջանկութեամբ ու գործոց յաջողութիւններով լեցուն՝ ի պայծառութիւն ԱՄՆ հայոց արեւելեան թեմի եւ Առաքելահաստատ մեր Սուրբ Եկեղեցու:

«Շնորհք Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի եղիցին ընդ ձեզ եւ ընդ ամենեսեսեանդ. ամէն»:

Օրհնութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Գիրս Օրհնութեան ի 10-ն Օգոստոսի
յամի Տեառն 2001 եւ ի թուին Հայոց ՌՆԾ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 183

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԽՈՍՔԸ ՆՈՐ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԱՌԻԹՈՎ

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Լույս Խորանից Հայրապետական Մեր օրհնությունն ենք բերում ուսումնական հաստատությունների սիրասուն սաներին՝ աշակերտներին ու ուսանողներին, կրթության շնորհակալ գործի բոլոր սպասավորներին և շնորհավորում նոր ուսումնական տարվա առիթով:

Վերստին հուսառատ բացվում են կրթօջախների դռները՝ դեպի գիտության ու ճանաչողության հրաշալի աշխարհ առաջնորդելու իրենց սաներին, հաղորդ դարձնելու դարերի խորքից մեր ժողովրդի ավանդած հարուստ մշակույթին, որ ծնունդ է հավատի անսպառ լույսի, իմացության սիրո և կրթության արժևորման:

Միրելի սաներ. ուսումնական նոր տարեշրջանի սեմին Հայոց Մեծ Դարձի 1700-ամյակի և Հայաստանի նոր Անկախության 10-ամյակի հոգևորոգ խորհուրդների ներքո Հայրական Մեր պատգամն ու հորդորն է Ձեզ, որ զորացնեք ձեր ուիսրը առ Աստված, հավատարմությունը առ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցին ու սրբազան Հայրենիքը մեր և ուսման մեջ ձեռքբերումներով պատրաստվեք ծառայելու կյանքի վերաշինության լայն Ճանապարհին կանգնած մեր ժողովրդին: Մենք հավատում ենք, որ դուք ուսումնառության ձեր ընթացքը անցնելու եք իսանդավառությամբ, ջանասեր ու նախանձախնդիր:

Մեր աղոթքն է, որ Բարին Աստված շնորհազարդի մեր բոլոր զավակներին և բարի արդյունքներով օրհնի ուսման ու կրթության գործին նվիրված ուսուցիչների ու բոլոր պատասխանատուների ջանքերը, նվիրումն ու սերը:

«Շնորհք, սէր եւ խաղաղութիւն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի եղիցին ընդ ձեզ եւ ընդ ամենեսեան. ամէն»:

Օրհնությամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. Էջմիածին,
31 օգոստոսի 2001 թ.

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒԹՅՈՒՆ

Սույն թվականի օգոստոս ամսին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Հայրապետի Կոնդակով «Ս. Ներսես Շնորհալի» շքանշանով պարգևատրվել է.

Մարգրիտ Միրունյանը (Կանադա):

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Հայրապետի հրամանով Ավագ քահանայության պատվի է արժանացել.

Տ. Գեղարդ քհն. Կարապետյանը (Կանադա):